Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

«ԱՆԱՍՏՎԱԾ» ԿՈԼԵԿՏԻՎԸ

Հռիփսիմեի վանքի[1] բլրակի հետև բարձր պարիսպներով շրջափակված է «Ղռի այգին»: Սա մեկն է այն վանքապատկան այգիներից, որ պետականացավ նորերս: Այժմ նա գտնվում է բատրակների կոլեկտիվի ձեռքին: «Վանքի կոլեկտիվը» մեքենաբար ասում են երբեմն՝ լավ չխորանալով ներքին իմաստի մեջ…

«Անաստվածների կոլեկտիվ» է կոչվում սովորաբար այն խումբը, որ այժմ տիրել և մշակում է այս կալվածը:

Հնամյա դարբասը ճռնչալով ճամփա է բացում մեզ համար և մենք մտնելով ներս, մի պահ կանգ ենք առնում մի ընդարձակ, բարձիթող արած այգու գլխին:

Գորշ, դեղնավուն նրա մակերեսի վրա տեղ-տեղ երևում են վտիտ, ազազուն վազեր և կիսաչոր հարթությունը տեղ-տեղ թարմացած է, սև հողը շուռ է եկել դեպի արևերես: Դա բատրակների բահերի տեղերն են: Այգին մշակվում է: Բայց մարդը չի երևում: Գնում ենք առաջ:

Այգու մեջտեղ մի ավերակ է կքված: Հնձանն է: Նրա պատի տակ են ժողովվել բատրակները: Մոտենում ենք, բարևում:

— Հանգստի ժամ էր,— բացատրում է կոլեկտիվի վարչության նախագահը,— մենք էլ օգտվեցինք՝ ժողով արինք:

Բոլորովին չքավոր մարդիկ նստած ու պառկած՝ հանգստանում են շոգից և աշխատանքից: Կան կանայք, աղջիկներ, տղաներ, ծերեր, բայց մեծ մասը երիտասարդներ են:

Քրտինքը պլպլում է նրանց դեմքին:

Նախագահի հետ հեռանում ենք դեպի դիմացի չինարին, դիտելու այգին:

Վիճակագրությունը— 35 չքավոր տնտեսություն, 115 շունչ, 4 հասակավոր-ծեր, 72 երիտասարդ, կին, տղա, աղջիկ՝ աստիճանական աշխատունակությամբ: Վարկավորումը[2]՝ 6400 ռ. որից՝ այգու մշակության համար 630 ռ., նորատունկ այգիների համար 1700 ռ., գյուղատնտեսական գործիքների համար 1800 ռ., ձիերի համար 900 ռ., զանազան՝ 400 ռ.: Տեղտնտեսությունը, որ ամեն օգնություն պատրաստ է հասցնելու կոլեկտիվին՝ նրան հատկացրել է՝ մի մոտորաղաց: Հայգյուղկոոպը նվիրել է մի տրակտոր: Գավառական գյուղատնտես ընկեր Թումանյանը շաբաթը 2 օր այցելում է ցուցմունքներ տալու: Վարչություն, հաշվապահություն, աշխատանքի կանոններ, ժողովներ, կարգապահություն: 14-ը կոմերիտ են, 4-ը կուսանդամ, 4 թեկնածու, մնացածն անկուսակցական:

Բոլորը բատրակներ են եղել, մեկը խոհարար: Մեծ մասը տաճկահայեր են: 3 տնտեսություն Վաղարշապատից իրենց տնտեսությունը թողել են հողբաժնին և եկել միացել են այս կոլեկտիվին: Մացակ Մարտիրոսյանը, 10 տարվա բատրակ, մտել է Վաղարշապատի տեխնիկումը, 3-րդ տարին է սովորում է:

— Կավարտի, ուսուցիչ կդառնա մեր կոլեկտիվում,— ասում է նախագահը,— ուժեղ է, քաղաքականապես շատ է առաջ:

Չինարին ստվեր է ձգում մեզ վրա: Ինձ առաջարկում են նստել միակ քարի վրա, որ ծառի բնի մոտն է ընկած: Դա մի գեղաքանդակ բեկոր է ինչ-որ հին շենքի:

— Սա մեր ժողովատեղին է,— բացատրում է նախագահը և ինքը նստում է ձիու չոր գանգի վրա:

Ընկեր Զեբեդը բնիկ վաղարշապատցի է: Փուռ, կոոպերատիվ, կոշկակարություն, զինվորություն, բատրակություն— ահա նրա կյանքի դպրոցը: Կարիքի դաժան սեղմիչ մեքենաները, անդուլ, ֆիզիկական աշխատանքը, կյանքի պայքարը նրա սև ու չոր դեմքին մի խորը կնիք է դրել: Նա թախծալի ժպիտ ունի և հանգիստ, բարի հայացք: Կյանքի բովում նա եփվել, ամեն ինչ հասկացել է և խմելով նրա դառնությունները՝ նա գիտե, թե ինչ պիտի անի: Ուստի և հանգիստ է իր գործի մեջ:

— Ինչպե՞ս է կոլեկտիվի անդամների փոխհարաբերությունը:

— Ուժեղ կարգապահություն է: Ոչ մի խախտում: Կան ուժեղ աշխատողներ, կան անսովորներ, բայց ծուլացող չկա: Դե, իրենց սեփական գործն է,— ժպտում է ընկեր Զեբեդը, իբրև ուժեղ հիմք բերելով այդ միտքը:

— Իհարկե գոհ են այս նոր վիճակից:

— Գոհ են, իհա՛րկե,— և նրա նիհար դեմքն ավելի է պայծառանում,— միայն…

— Վաղը 50 փութ հաց կստանաք,— կպցնում է ընկեր Եղիազարյանը, ձեռաց, թույլ չտալով որ այդ պայծառ ժպիտը սառչի՝ հացի մտահոգությունից:

— Դե, մեր դրությունն ընկեր Տրդատ, դուք լավ գիտեք,— արդարանում է նախագահը:

Ախր բանը նրանումն է, որ կոլեկտիվը, ճիշտ է, իբրև թե տնտեսություններ ունի,— մի կով, մի եզ, մի-մի ոչխար, բայց հիմա, երբ նրա անդամներն էլ չեն բանում ուրիշի տնտեսություններում և ոչ մի օրավարձ չունեն դրսից՝ այս րոպեիս իսկական թռչունների օրումն են: Նրանք ունեն հողեր, 50 դեսիատին, որից 34-ն այգի, 16-ը վարելահող—բայց այս րոպեիս հաց չունեն: Դեռ ձկները ծովումն են, պետք է որսալ: Ընկեր Զեբեդն ուրախացավ: Հանապազօրյա հացի խնդիրը լուծվեց: Պատմում է իրենց ժողովների մասին:

— Դուք ո՞նց եք էս կաթողիկոսական տեղը նստում,— կատակում է ընկեր Տրդատը նախագահի հետ, ցույց տալով այն քարը, որի վրա նստած էի ես:

(Այստեղ է եղել նստելիս Խրիմյանը)[3]:

— Ո՞նց անենք, ժողովատեղ չունենք: Մնացել ենք բացը,— բացատրում է նախագահը,— ժողովատեղներս կամ էն հնձանի պատի տակն է, կամ էս չինարին:

Կոլեկտիվն ամեն շաբաթ երեկո հավաքվում է այս չինարու տակ ժողովի: Քարը ծառայում է որպես սեղան կամ որպես նստարան՝ նայած թե տվյալ մոմենտին ինչի՞ կարիք ունի այս «բացօթյա» կոլեկտիվը: Արծարծվում են և ամեն տեսակի խնդիրներ: Հասկանալի բան է, առայժմ գերակշռում են տնտեսական խնդիրները: Բայց, իհարկե, քաղաքական խնդիրները նույնպես տեղ ենբռնում: Արծարծվող խնդիրներն առաջ են գալիս շատ անգամ ժողովի ժամանակ, անսպասելի… որովհետև կոլեկտիվն ակտիվ մասնակցում է իր տնտեսության հարցերի քննության և շատ անգամ (հետագայում ինչպես պարզեց գյուղատնտես ընկեր Թումանյանը) իրենք են որոշ դիրեկտիվներ տալիս ղեկավարության, թարմ, կենդանի հարցեր առաջ բերելով: Կանայք ևս ակտիվ են:

Բատրակները հանգստացել են և արդեն բահերն առած ընկել են այգու վրա, աշխատում են: Գնում ենք նրանց կողմը:

Հնձանի ստվերից դեպի մեզ է շարժվում մի սևազգեստ, կորաքամակ պառավ: Նա ճոճվում է խորդուբորդերի մեջ: Նիհար է նա, սաստիկ արևառ, կնճռոտ և վտիտ ձեռքը մեկնելով նշան է անում նախագահին: Մենք սպասում ենք, որ գա հասնի:

— Սա էլ իմ մայրիկս է,— ասում է Զեբեդը և մեղմ, հովանավոր ժպտով նայում է պառավին:

— Բարև, մայրիկ:

Ծխախոտ է ուզում որդուց:

— Քանի՞ տարեկան ես: (Ծանր է լսում): Որդին մոտենում է ականջին և բարձր կրկնում հարցը.— Քանի՞ տարեկան ես:

— Եսի՞մ, որդի… Լոռիս Մելիքովի[4] կռվին աղջիկ էի:

Ի՞նչ հնություն… Աշխատո՞ւմ ես, մայրիկ…

— Ո՞նց կլի, որ չաշխատեմ… Հա, հմի լավ ա որ ազատ ենք: Մի օրը մի տեղ էինք փախչում: Թագավորի ժամանակ… թագավորի ժամանակ ի՞նչ լավ էր, չարչարանքը զոռ էր…

Բայց պառավը մեկ-մեկ անհանգիստ շարժումներ է անում: Մտահոգ է ինչ-որ: Ընկեր Զեբեդն ականջը մոտեցնում է պառավի բերանին: Սա ինչ-որ բան է լփրտում: Հանկարծ նախագահը քրքջում է.

— Չէ, չէ, մի՛ վախի…

— Եսի՞մ, բալա ջան, ես էլ ասըմ եմ չըլի թե նոր բան ա դուս եկել, բաղերն ուզում են ետ խլեն:

Մեր գալը կասկած է գցել պառավի մեջ թե՝ կարելի է եկել ենք բաղը ետ գրավելու…

Աշխատանքը եռում է: Կոլեկտիվի անդամները բահերովհարձակվել են վանքապատկան հողի վրա և արագ-արագ հարվածում են: Հարվածում են, հողի սիրտը հանում ու հետ-հետ քաշվում: Իսկ կանայք ու աղջիկները քանդված հողից հանում են վազի արմատներն ու թափ տալով՝ հավաքում են գոգնոցների մեջ: Նոր եմ նկատում, որ պառավն էլ նրանց մեջ է:

Առողջ ու ջլապինդ բազուկները պրկվում են, քրտինքը հոսում է ճակատներից ուղիղ հողի մեջ: Նրանք նվում են և հարվածում:

— Անաստվա՞ծ եք դառել, ընկերներ:

— Ի՞նչ անենք, աստուծով էինք՝ բան չտեսանք, անաստված դառանք, որ տեսնենք:

— Մի քիչ հանգիստ աշխատեցեք, շուտ կթուլանաք:

— Հանգի՞ստ… ժամանա՞կ կա…,— հարում է մի թուխ, եփվող երիտասարդ,— ուշացել ենք:

Այո, նրանք ուշացել են դարեր… Չեմ ուզում խոսակցություններով հոգնեցնել նրանց: Դիտում եմ: Դիմացս բարձրանում է Հռիփսիմեի հուշարձանը, արդեն իբրև թանգարանային, գեղեցիկ առարկա: Բայց կյանքն ուզում է ապրել: Եվ ահա ապրում է նա: Կյանքը— այս նախկին բատրակները: Նրանք օղակել են այս վանքը, նրա շուրջն ստեղծել են նոր կյանք— իսկ նրան գցել են թանգարան: Նա պատմություն է արդեն: Դեղնավուն մամուռը փոշու հետ նստել է գմբեթների վրա և նա քնած է արդեն: Իսկ այստեղ մի ուրիշ փոշի է եռում— կյանքի, աշխատանքի, նոր պատմություն: Հողի մարդը, հողի պրոլետարը տիրացել է իր դարավոր իրավունքին՝ իր հողին և այժմ ընկել է նրա վրա, ծեծում, հարվածում է հևիհև, փորում, քանդում է, ուզում է մտնել նրա մեջ, միանալ նրան և նրա հետ ծլել, ծաղկել, արդյունավորել ու ապրել:

Մեկը մեկից երիտասարդ տղերք, մեկը մեկից եռանդուն, հուսալից, համերաշխ, ուրախ, ուղղակի ուտում են հողը: Ահա նրանցից մի քանիսը— հենց այս այգում նախկին բատրակ էր, հիմի՝ տեր: Ահա մի ուրիշը, 1914-ին եկել է Տաճկաստանից: Եղել է Կարմիր բանակում— ապա բատրակ:

— Իսկ Տաճկաստանում ի՞նչ էիր:

— Դե, էնտեղ էլ բատրակ էի:

— Սա էլ մեր «շոֆերն» է,— ցույց է տալիս ընկեր Զեբեդը մի երիտասարդի վրա, որ փորում է նրանց հետ,— տրակտորի գործում ազատ ժամանակ որ գտնում է, վազում է փորելու:

— Ընկերնե՛ր, ձեր այս հողը կարո՞ղ է մեկը խլել ձեր ձեռից:

— Ո՞վ, ապա ո՛ւր է բահը,— ծիծաղում է մի ուժեղ երիտասարդ:

Մենք շնորհակալություն ենք հայտնում բոլորին, ընկեր Զեբեդին և հեռանում:

Կոլեկտիվն ունի լավ ուժեր, տրակտորիստներ, մեխանիկներ, ունի գյուղատնտեսի ղեկավարություն. նախագահը տակտով և կտրուկ մտքի տեր երիտասարդ է, միանգամայն գիտակից: Կոլեկտիվը վարել է բոլոր բամբակացան հողերը: Արդեն նրա տրակտորը դրսի աշխատանք էլ է կատարում և բավական գումար շահում կոլեկտիվի համար:

Հող է ստացել նաև տնային շինարարության համար:

— Մի երեք տարուց հետո քաղաքի ղեկավարությունը նրանց ձեռին կլինի,— ասում էր գյուղատնտես ընկեր Թումանյանը:

Դա ակներև է:

«ԱՆԱՍՏՎԱԾ» ԿՈԼԵԿՏԻՎԸ

(Էջ 71)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1928, № 123: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Հայկական ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկը՝ ս. Հռիփսիմե տաճարը հիմնադրվել է 618 թ.:

2 1926 թ. հոկտեմբերի 9-ին ՍՍՀՄ ժողկոմխորհը որոշում է ընդունել չքավորական տնտեսությունների վարկավորման ֆոնդ ստեղծելու մասին: Վարկավորման այս ֆոնդը մեծապես նպաստել է կոլեկտիվ տնտեսությունների ամրապնդմանը և զարգացմանը:

3 Խրիմյան Մկրտիչ (1820—1907) — ամենայն հայոց կաթողիկոս (1892— 1907), գրող, հասարակական-մշակութային գործիչ:

4 Նկատի ունի 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որի ժամանակ կոմս Միքայել Լորիս-Մելիքովը (1825—1888) եղել է կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարը: